# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇԴ-182-2026
# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «31» «03» 2026 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետև՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար Հ. Հակոբյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Արտպրոգրես» մշակութային հասարակական կազմակերպությունը (այսուհետև՝ կազմակերպություն), ի դեմս կազմակերպության նախագահ Ա. Հարությունյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետև միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի «ՀՀ 2026 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1910-Ն որոշումը (այսուհետև՝ որոշում) և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարի 2026 թվականի հունվարի 13-ի N 19-Ա/2 հրամանով հաստատված «Մշակութային միջոցառումների իրականացում ՀՀ մարզերում» դրամաշնորհի հատկացման մրցույթի գնահատող հանձնաժողովի 2025 թվականի հոկտեմբերի 23-ի նիստի N 3 արձանագրությունը՝ որոշման «1196. Մարզերի մշակութային զարգացման ծրագիր» ծրագրի «11001. Մշակութային միջոցառումների իրականացում ՀՀ մարզերում» միջոցառման շրջանակներում Երաժշտական մրցույթ-փառատոնային ծրագրի (այսուհետև՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետև՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԳԻՆԸ

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով պայմանագրի 5.1-ին կետով սահմանված կարգով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված գումարից 8000,0 հազար (ութ միլիոն) դրամ՝ համաձայն Հավելված N 2-ի, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետև՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի Հավելված 1-ում:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝**

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. կազմակերպությունից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2-րդ կետով նախատեսված տուգանքը, իսկ պայմանագրով նախատեսված հաշվետվությունների

ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում՝ սույն պայմանագրի 6.3-րդ կետով նախատեսված տույժերը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. կազմակերպության կողմից սույն պայմանագրով նախատեսված ծրագրի ոչ ֆինանսական ցուցանիշների թերակատարման դեպքում համապատասխան չափով նվազեցնել ֆինանսավորումը,

2.1.6. սույն պայմանագիրը ՀՀ օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ ծրագրի արդյունքները:

**2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝**

2.2.1. իրականացված ծրագրի արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը,

2.2.2. իրականացված ծրագրի արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.3. անհրաժեշտության դեպքում սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված ծախսային ուղղությունների միջև և (կամ) ծախսային ուղղությունների տողերի միջև իրականացնել համապատասխանաբար յուրաքանչյուր ծախսային ուղղության և ծախսային ուղղության տողերի գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

**2.3. Պետական մարմինը պարտավոր է՝**

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) ծրագրով նախատեսված դեպքերում իր և կազմակերպության կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել կազմակերպությանը, այդ թվում՝ կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ,

2.3.4. իրականացված ծրագրի մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել սույն պայմանագրի 4.2-րդ կետում նշված ժամկետում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված ծրագիրը համապատասխանում է սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

**2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝**

2.4.1. սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,
2.4.2. պետական մարմնին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ դրանք վերացնելու համար,
2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,
2.4.4. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը համապատասխան հաշվառում,
2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,
2.4.6. պետական մարմնի կողմից ծրագրի իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,
2.4.7. իրականացնել ծրագրի հանրայնացման անհրաժեշտ գովազդատեղեկատվական արշավներ սոցիալական հարթակներում (տոմսերի վաճառքի հարթակները սոցիալական հարթակներ չեն համարվում): Միջոցառումների իրականացման մասին իրազեկման բոլոր հարթակների տեսանելի վայրում (ազդագրեր, հրավիրատոմսեր, պաստառներ՝ ներառյալ էլեկտրոնային տարբերակները) պարտադիր կերպով հրապարակել ՀՀ զինանշանը և պետական մարմնի անվանումը՝ պահպանելով «Հայաստանի Հանրապետության զինանշանի մասին» ՀՀ օրենքի պահանջները:

Գովազդատեղեկատվական բնույթի այլ հրապարակումներում (մամուլի հրապարակումներ, համերգային ծրագիր-բուկլետներ, տեսահոլովակներ, մամլո հաղորդագրություններ, ասուլիսներ, գրավոր և/կամ բանավոր այլ խոսք) կազմակերպությունը պարտավոր է ոչ միայն հրապարակել ՀՀ զինանշանն ու պետական մարմնի անունը, այլև նշել պետական մարմնի մասնակցության ձևաչափը (պետական մարմնի ֆինանսավորմամբ, պետական մարմնի աջակցությամբ), որը կարող է արտահայտվել ինչպես ուղղակի ֆինանսավորման, այնպես էլ թատերահամերգային դահլիճների տրամադրման և կազմակերպական այլ աջակցության տեսքով: Համաֆինանսավորման դեպքում՝ պետական մարմնին տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ միջոցառումներին աջակցող կազմակերպության(ների), ֆինանսավորման չափի և վերջինիս(ներիս) հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,
2.4.8. սույն պայմանագրից բխող ծրագիրը չկատարելու դեպքում վերադարձնել պետական մարմնի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 1.1-ին կետում նախատեսված գումարի 5.0 (հինգ) տոկոսի չափով,
2.4.9. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան, իսկ միջոցառման համար կազմակերպության կողմից ընդգրկվող աշխատողների հետ աշխատանքային հարաբերությունները կարգավորել ՀՀ Աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով,

2.4.10. սույն պայմանագրի 7.1-ին կետով սահմանված ժամկետներում պետական մարմնին ներկայացնել հաշվետվություններ (ֆինանսական և բովանդակային) կատարված ծախսերի և իրականացված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը ներկայացվում է սույն պայմանագրի Հավելված N 3-ով սահմանված ձևանմուշով՝ նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպության մոտ և վերջինս պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար: Բովանդակային հաշվետվությամբ ներկայացվում է ամբողջական տեղեկատվություն միջոցառումների իրականացման, հրապարակման և ընթացքի, այդ թվում՝ արդյունքների գնահատման, մասնակիցների քանակի վերաբերյալ, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլն, ներառյալ՝ իրազեկման բոլոր հարթակների տեսանելի վայրում պետական մարմնի (որպես ֆինանսավորող կողմ) վերաբերյալ այլ տեղեկատվական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով: Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում բովանդակային հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար:
2.4.11. սույն պայմանագրով սահմանված ծրագրի իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև չհիմնավորված ծախսերի գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե:

## 3. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

3.1. Պետական մարմիը ծրագրի իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:
3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:
3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:
3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:
3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Սույն պայմանագրի արդյունքն ընդունվում է պետական մարմնի և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ: Մինչև սույն պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ կազմակերպությունը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է *www.minfin.am* հասցեով գործող կայքի «Դրամաշնորհներ» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում) պետական մարմնին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը (հավելված N 4) և հաշվետվությունը: Ընդ որում կազմակերպությունը հանձնման-ընդունման ակտը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին:

4.2. Եթե իրականացված ծրագիրը համապատասխանում է սույն պայմանագրի պայմաններին, պետական մարմինը պայմանագրի 4.1-ին կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:
4.3. Եթե իրականացված ծրագիրը կամ դրա մի մասը չի համապատասխանում սույն պայմանագրի պայմաններին, ապա պետական մարմինը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և սույն պայմանագրի 4.2-րդ կետում նշված ժամկետում armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում պետական մարմինը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կազմակերպության նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:
4.4. Եթե սույն պայմանագրի 4.2-րդ կետով սահմանված ժամկետում պետական մարմինը չի ընդունում սույն պայմանագրի 4.1-ին կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և սույն պայմանագրի 4.2-րդ կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը պետական մարմինը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

## 5. ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

5.1. Սույն պայմանագրի 3.1-ին կետում սահմանված գումարի 80 %-ը կազմակերպությանը հատկացվում է սույն պայմանագրի կնքումից հետո, իսկ 20 %-ը՝ սույն պայմանագրի 4.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ կազմակերպության հաշվեհամարին փոխանցելու միջոցով:
5.2. Համաձայն «ՀՀ 2026 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 24-րդ մասի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2026 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:
5.3. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված գումարի չափը կարող է փոփոխվել սույն պայմանագրով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիմքերով ու կարգով:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:
6.2. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության

համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:
6.3. Սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում կազմակերպությունը պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, սույն կետով սահմանված տույժերը վերաբերում են պետական մարմնին ներկայացվող ինչպես ֆինանսական, այնպես էլ՝ բովանդակային հաշվետվություններից յուրաքանչյուրին:
6.4. Սույն պայմանագրի 6.2-րդ և 6.3-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը կարող է հաշվարկվել և հաշվանցվել ծրագրի իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ: Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով:
6.5. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
6.6. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

7.1. Սույն պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը մինչև 2026 թ. դեկտեմբերի 6-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ մինչև 2026 թվականի դեկտեմբերի 10-ը:
7.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:
7.3. Սույն պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

## 8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև

պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում սույն կարգի պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պետական մարմինը միակողմանի լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ պետական մարմինը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պետական մարմնի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.2. Կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական՝ www.escs.am կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը պետական մարմինը այն ուղարկում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.3.Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.4. Սույն պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.5. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

## 10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝ | ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝ |
|---|---|
| ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | «Արտպրոգրես» մշակութային ՀԿ |
| Երևան, Վ. Սարգսյան 3 | Արմավիր, Լուսագյուղ համայնք, Ավետիսյան 8 |
| Կառավարական տուն N 2 | «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, «Էջմիածին»մ/ճ |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | h/h 163118028550, հվհհ 04428157 |
| h/h 900011039097, հվհհ 02698732 | հեռ.՝ 094103686 |
| Գլխավոր քարտուղար՝ | Նախագահ |
| _____ Հ. Հակոբյան | _____ Լ. Հարությունյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ. Տ. | Կ. Տ. |

Հավելված N 1
« 31 » «03 » 2026 թ.
N ՄՇԴ-182 2026 պայմանագրի

# Մ Ի Ջ Ո Ց Ա Ռ Ո Ւ Մ Ն Ե Ր

## Երաժշտական մրցույթ-փառատոնային ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1 | Կազմակերպության անվանում | «Արտպրոգրես» մշակութային հասարակական կազմակերպություն |
| 2 | Կազմակերպության գտնվելու վայր | ՀՀ, Արմավիրի մարզ, Արաքս համայնք, Լուսագյուղ վարչական շրջան |
| 3 | Ծրագրի անվանում | Երաժշտական մրցույթ-փառատոնային ծրագիր |
| 3.1 | Բովանդակություն | Երաժշտական մրցույթ-փառատոնային ծրագրի շրջանակներում կիրականցվի երկու միջոցառում<br>*«Փոքրիկ քայլ» երաժիշտ-կատարողների 7-րդ միջազգային մրցույթ-փառատոն*<br>Էջմիածնի «Փոքրիկ քայլ» մանկապատանեկան մրցույթ-փառատոնը հիմնադրվել է 2019թ մայիսին, Էջմիածնի քաղաքապետարանի հետ համատեղ նախաձեռնությամբ:<br>Ամենամյա այս փառատոնն իրականացվում է Վաղարշապատի համայնքապետարանի և «Արտպրոգրես» մշակութային հասարակական կազմակերպության միջև կնքված փոխգործակցության հուշագրի շրջանակներում:<br>6-րդ անգամ անցկացված փառատոնի մասնակիցների թիվը գերազանցում է 1500-ը:<br>Մրցույթ-փառատոնն անց է կացվում 4 տարիքային խմբերով և 12 անվանակարգերում:<br>Փառատոնի ժյուրիի կազմում հանդես են գալիս Հայաստանի և արտերկրի հեղինակավոր երաժիշտ-կատարողներ:<br>«Փոքրիկ քայլ» միջազգային մրցույթ-փառատոնին մասնակցելու հնարավորություն ունեն 8-20 տարեկան երաժիշտ սաներ, Հայաստանի և այլ երկրների երաժշտական և արվեստի ուսումնական հաստատություններից:<br>Յուրաքանչյուր անվանակարգի մեծ մրցանակակիրը ստանում է 40000, մանկավարժը՝ 50000 իսկ նվագակցողը 30000 դրամ խրախուսական մրցանակ:<br>*«Հեղինակային երգի» 2-րդ հանրապետական մրցույթ-փառատոն*<br>«Հեղինակային երգի» հանրապետական մրցույթ-փառատոնի նպատակն է բացահայտել երգարվեստի ոլորտում ստեղծագործող անհատ-կատարողներին, ովքեր հանդես են գալիս իրենց հեղինակած ստեղծագործություններով՝ հեղինակային երգի, ռոմանսի և աշուղական երգի ժանրերում: «Հեղինակային երգի» հանրապետական մրցույթ-փառատոն առաջին անգամ անցկացվել է 2024 թվականին:<br>2025 թվականին փառատոնը միանալով «Փոքրիկ քայլ» միջազգային մրցույթ-փառատոնին, դարձավ առանձնացված անվանակարգ:<br>2026 թվականին երկրորդ անգամ անցկացվող «Հեղինակային երգ» մրցույթը կկազմակերպվի որպես համապետական մրցույթ-փառատոն: Մրցույթ-փառատոնին կմասնակցեն 10-35 տարեկան ստեղծագործողներ և անհատ կատարողներ՝ ներկայացնելով բացառապես իրենց հեղինակային ստեղծագործությունները: «Հեղինակային երգ» 2-րդ մրցույթ-փառատոնի ժյուրիի կազմում ընդգրկված կլինեն Հայաստանի երաժշտարվեստի հայտնի ու պատվավոր հեղինակ-կատարողներ: |

| | | |
|---|---|---|
| | | Մրցույթ-փառատոնն իրականացվում է երկու փուլով<br>● առաջին փուլն անցկացվում է ՀՀ մարզերում,<br>● երկրորդ և եզրափակիչ փուլերն անցկացվում են Էջմիածնի Կոմիտասի անվան մշակույթի պալատում: |
| 3.2 | Նպատակ | Երաժշտական մրցույթ-փառատոնային ծրագրի նպատակն է նպաստել Հայաստանի և արտերկրի երիտասարդ երաժիշտների ու ստեղծագործողների բացահայտմանը և մասնագիտական զարգացմանը, խթանել կատարողական և հեղինակային երգարվեստի զարգացումը, աջակցել տաղանդավոր սաների և անհատ կատարողների ստեղծագործական գործունեությունը, ինչպես նաև նպաստել մարզային և միջազգային մշակութային համագործակցության զարգացմանը, մարզերում մշակութային կյանքի ակտիվացմանը: |
| 3.3 | Անցկացման ժամկետ | ապրիլ 2026 թ.– 05 դեկտեմբերի 2026 թ. |
| 3.4 | Անցկացման վայր | Հայաստանի Հանրապետություն |
| 3.5 | Ակնկալվող արդյունքներ | -Տաղանդավոր երիտասարդ երաժիշտների ստեղծագործողների բացահայտում և խրախուսում<br>-Երիտասարդ կատարողների և հեղինակների մասնագիտական կարողությունների և հմտությունների խթանում<br>-Հեղինակային երգարվեստի հանրահռչակում հանրապետությունում և միջազգային հարթակներում<br>-Մրցույթ-փառատոնի շրջանակում ստեղծագործական նախագծերի և միջազգային մշակութային փորձի փոխանակման համար հարթակների ստեղծում |
| 3.6 | Ոչ ֆինանսական ցուցանիշներ | *«Փոքրիկ քայլ» մրցույթ-փառատոնի՝*<br>մասնակիցներ՝ 1645<br>մասնակից ուսումնական հաստատություններ՝ 140<br>անվանակարգեր՝ 12<br>«Հեղինակային երգ» մրցույթի<br>մասնակիցներ՝ 45<br>մասնակից ուսումնական հաստատություններ՝ 15<br>հանդիսատեսի ընդհանուր թիվ՝ նվազագույնը՝ 4500 |

**ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝**
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011039097, հվհհ 02698732
Գլխավոր քարտուղար՝
_____ Հ. Հակոբյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝**
«Արտպրոգրես» մշակութային ՀԿ
Արմավիր, Լուսագյուղ համայնք,
Ավետիսյան 8
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, «Էջմիածին»մ/ճ
հ/հ 163118028550, հվհհ 04428157
հեռ՝ 094103686
Նախագահ՝
_____ Ա. Հարությունյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«31» «03» 2026 թ.
N ՄՇԴ-18Հ-2026 պայմանագրի

## Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ

Երաժշտական մրցույթ-փառատոնային ծրագրի կազմակերպման ծախսերի

| Հ | Ծախսատեսակի անվանումը | Միավոր | Քանակ | Միավորի արժեքը (դրամ) | Գումար (հազար դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1 | **Վարձատրություն** *(ներառյալ հարկերը)** | | | | **2724.2** |
| | Ծրագրի ղեկավար՝ 1 մարդ, 5 ամիս | մարդ/ամիս | 5 | 185000 | 925.0 |
| | Համակարգող՝ 1 մարդ, 2 ամիս | մարդ/ամիս | 2 | 55000 | 110.0 |
| | Կազմակերպիչ՝ 1 մարդ, 2 ամիս | մարդ/ամիս | 2 | 60000 | 120.0 |
| | Կազմակերպիչ (հեղինակային երգի միջոցառման)՝ 1 մարդ, 2 ամիս | մարդ/ամիս | 2 | 110000 | 220.0 |
| | Ֆինանսական համակարգող՝ 1 մարդ, 5 ամիս | մարդ/ամիս | 5 | 64000 | 320.0 |
| | Գնումների համակարգող՝ 1 մարդ, 4 ամիս | մարդ/ամիս | 4 | 50000 | 200.0 |
| | Հաղորդավար (գալա համերգի) | մարդ | 1 | 120000 | 120.0 |
| | Հաղորդավար (հեղինակային երգի միջոցառման)՝ 1 մարդ, 2 ամիս | մարդ/ամիս | 2 | 90000 | 180.0 |
| | Սպասարկող անձնակազմ՝ 3 մարդ, 4 օր | մարդ/օր | 12 | 6600 | 79.2 |
| | Հեղինակային երգի ժյուրիի անդամներ՝ 3 մարդ, 2 ամիս | մարդ/ամիս | 6 | 75000 | 450.0 |
| 2 | **Մրցանակներ, մեդալներ** | | | | **1728.0** |
| | Մրցանակ մասնակիցների մանկավարժներին | հատ | 12 | 50000 | 600.0 |
| | Մրցանակ գրան-պրի | հատ | 12 | 40000 | 480.0 |
| | Մրցանակ նվագակցողներին | հատ | 12 | 30000 | 360.0 |
| | Առաջին կարգի դափնեկրի մեդալ (մետաղյա, փորագրությամբ)՝ 12անվանակարգ* 4 մասնակից | հատ | 48 | 2000 | 96.0 |
| | Երկրորդ կարգի դափնեկրի մեդալ (մետաղյա, փորագրությամբ)՝ 12անվանակարգ* 4 մասնակից, | հատ | 48 | 2000 | 96.0 |
| | Երրորդ կարգի դափնեկրի մեդալ (մետաղյա, փորագրությամբ)՝ 12անվանակարգ* 4 մասնակից | հատ | 48 | 2000 | 96.0 |
| 3 | **Կազմակերպչական ծառայություններ** | | | | **1370.0** |
| | Ձայնային օպերատոր՝ 1 մարդ, 2 ամիս*95,0 հ.դ. | հատ | 1 | 190000 | 190.0 |
| | Տեսանկարահանում՝ 24 օր*22,0 հ.դ. | հատ | 1 | 528000 | 528.0 |
| | Աուդիո տեխնիկայի վարձակալություն՝ 1 օր*65,0 հ.դ. | հատ | 1 | 65000 | 65.0 |
| | Լուսանկարահանում՝ 24 օր*18,0 հ.դ. | հատ | 1 | 432000 | 432.0 |
| | Վեբ-դիզայների ծառայություն (վկայականի, վահանակի, մրցանակների դիզայն) | հատ | 1 | 155000 | 155.0 |
| 4 | **Տրանսպորտային ծառայություն**<br>Երևան-Վանաձոր-Երևան, Երևան-Եղեգնաձոր-Երևան, Երևան-Հրազդան-Երևան | հատ | 1 | 146000 | **146.0** |
| | Կեցության ծախսեր, օրապահիկ՝ 10 մարդ*4 օր | մարդ/օր | 40 | 5000 | **200.0** |
| 5 | **Տպագրական ծառայություն**<br>Դիպլոմ՝ 300 հատ*600 դրամ<br>Շնորհակալագիր (ուսումնական հաստատություններին)՝ 150 հատ*1700 դրամ | **հատ** | **1** | **435000** | **435.0** |
| 6 | **Գրենական պիտույքների ձեռք բերում** | փաթեթ | 10 | 6346 | **63.5** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | | **6666.7** |
| **ԱԱՀ** ** | | | | | **1333.3** |
| **ԱՄԲՈՂՋԸ** | | | | | **8000.0** |

*Ծախսերը պետք է իրականացվեն բացառապես ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով

** ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման Կազմակերպության կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

**ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝**
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011039097, հվհհ 02698732
Գլխավոր քարտուղար՝
---------- Հ. Հակոբյան
(ստորագրություն)
Կ. Տ.

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝**
«Արտպրոգրես» մշակութային ՀԿ
Արմավիր, Լուսագյուղ համայնք, Ավետիսյան 8
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, «Էջմիածին» մ/ճ
հ/հ 163118028550, հվհհ 04428157
հեռ. 094103686
Նախագահ
---------- Մ. Ստեփանյան
(ստորագրություն)
Կ. Տ.

Հավելված N 3
«31» «03» 2026 թ.
N ՄՇԴ-182-2026 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Կատարող կազմակերպությունը _____

Ծրագրի անվանումը _____

| NN | Նախահաշվի հոդվածը | Գումարը՝ համաձայն նախահաշվի (դրամով) | Փաստացի գումարը (դրամով) | Շեղումը նախահաշվի համեմատ (+- դրամով) | Հոդվածի ծախսը հավաստող փաստաթղթի անվանումը, համարը և ամսաթիվը |
|---|---|---|---|---|---|
| 1 | | | | | |
| 2 | | | | | |
| 3 | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | Ընդամենը | | | | |

«_____» _____ 2026 թ.

Կատարող կազմակերպության ղեկավար

_____ /_____/

(անուն-ազգանուն) (ստորագրություն)

ՓԱՍՏԱԹՂԹԵՐՆ ԸՆԴՈՒՆԵՑ՝

ՀՀ ԿԳՄՍ նախարարության
պատասխանատու՝

----------/----------/

(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Կատարող կազմակերպության
գլխավոր հաշվապահ

_____ /_____/

(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Հավելված N 4
«31» «03» 2026 թ.
N ՄՇԴ-182-2026 պայմանագրի

| Կազմակերպություն | Պետական մարմին |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հհ _____ | հհ_____ |
| հվհհ _____ | հվհհ_____ |

**ԱԿՏ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

*«  » «  » 20  թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պետական մարմինը և կազմակերպությունը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված ----- հաշվետվությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում կազմակերպությունն իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

| N | Իրականացված միջոցառման | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | գործառույթի համառոտ նկարագիրը | արդյունքը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ պայմանագրի/ |
| | | | ըստ պայմանագրի | փաստացի | ըստ պայմանագրի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և հաշվետվությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |